— Հա՛, նա կարդալ շատ է իմանում: Միշտ գրում է, միշտ կարդում է:

Նրա մէջ դարձեալ խաղաց խենթութեան քամին: Չնայելով, որ իմ եւ նրա պարապմունքները բոլորովին տարբեր պէտք է լինէին նրա պարոնի մօտ, բայց նա, ինչպէս երեւում էր, գտաւ իմ մէջ իր ապագայ ախոյեանին եւ, մօտենալով ինձ, բռնեց իմ թեւքից, ասելով.

— Եկ, ուժներս փորձենք:

Նա մրցութիւնը միայն ուժի մէջ էր ճանաչում: Առանց իմ համաձայնութիւնը առնելու, մի պատրաստուած ըմբիշի նման, երկու ձեռքով բռնեց իմ մէջքից, կամենում էր բարձրացնել եւ գետին խփել: Հակամայից ստիպուեցաւ ընդդիմանալ: Ուժերի հաւասարակշռութեան պատճառով երկար մենք միմեանց հրհրում էինք, մինչեւ երկուսս էլ ընկանք նրա մահճակալի վրայ: Տախտակները ճռճռացին, եւ մահճակալը փշրուեցաւ մեր հարուածի ծանրութեան ներքոյ: Նա կատաղած վերկացաւ, առաջարկեց նորից սկսել գօտեմարտութիւնը: Ես հրաժարուեցայ, մանաւանդ երբ նկատեցի, որ մեր ընկնելու միջոցին դիպանք պատի մօտ դրած մահակին, որը իր տեղից սաստկութեամբ դուրս թռաւ եւ, զարկուելով կրակի մօտ դրած սրճամանին, ջուրը վիթոեցաւ կրակի վրայ, եւ մոխրախառն գոլորշին լցրեց փոքրիկ սենեակը:

Կարող էք երեւակայել իմ ամօթը եւ իմ քրտինքը: Այդ իմ առաջին շնորհքն էր, որ ցոյց տուի: Ի հարկէ, կից սենեակում թէ՛ Ասլանը եւ թէ՛ Համրը կը լսէին մեր աղմուկի ձայնը: Ի՞նչ կը մտածէր Ասլանը, ի՞նչ կը մտածէր Համրը: Դեռ որքա՜ն անկիրթ էի ես, որքա՜ն տհաս էի: Մի հասարակ, կիսավայրենի սպասաւորի մօտ ինձ պահել չկարողացայ: Այդ անցքը, իմ կեանքում պատահած եւ վաղուց մոռացուած շատ անցքերի թւում, մնաց ինձ համար անմոռանալի, որովհետեւ դա մի ապացոյց էր, թէ կրթութեան որ աստիճանի վրայ էի գտնուում ես, երբ Ասլանը ինձ յանձնեց Համրին:

Մեր կատարած անկարգութիւնից յետոյ փոքր էր մնում, որ պիտի տեղի ունենար մի այլ անկարգութիւն: Յամառ շատախցին չէր ուզում կրակ վառել եւ նորից սուրճ պատրաստել, եւ ոչ ինձ թոյլ էր տալիս, որ ես պատրաստեմ: «Աստուած չկամեցաւ, — ասում էր նա, — եթէ աստուած կամենար, սրճամանը չէր վիթոի»: Նա մեր յիմարութիւնը հաշուի մէջ չէր դնում:

Կից սենեակից լսելի եղաւ Ասլանի ձայնը, որ կանչում էր ինձ: Երբ մտայ նրանց մօտ՝ փոքր-ինչ հանգստացայ: Երեւում էր, որ նրանք մեր աղմուկի ձայնը չէին լսել, որովհետեւ ինձ ոչինչ նկատողութիւն չարեցին: Մինչեւ անգամ մոռացել էին, որ սուրճ էին պատուիրել: Ինչ՞ն էր այնպէս զբաղեցրել նրանց: Սուսուփուս նստեցի իմ տեղում: Համրը դեռ առաջուայ պէս պառկած